

ՆՈՐԻՅ ԵԿԵՂԵՅԱՎԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Մայր Արքո. Ս. էջմիածնի Հոգեւոր ձեմարանի դասախոս և Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ Տիգր Հայկ Մթբոնեան յօդուածաւով մը դրկած է «Սիոն»ի, Հայ Եկեղեցւոյ ծագումի մասին։ Կը նրանցակի զայն մեծ գոհունակութեամբ։

ԽՄԲ.

Ա. — Հայ Եկեղեցու ծագումը

«Ալսորական Աղքիւները Հայ Եկեղեցու Մասին» յօդուածը պատրաստելի իս, ծանօթացի է ինք նաև Հայ Կտորուկ Հայրերի վերջին երկու տասնամետեներին հրատարակած մի քանի գրքերին ու հոգորդումներին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու պատմութեանն, Այս աշխատութիւններում ևս համարես նոյնութեամբ, նոյն ոգով և նոյն կրքառութեամբ պաշտպանուել են նոյն մեղադրանքները, որոնք դարեր շարունակ, գեռ վաղ միջնադարից, եղել էին Հայ Եկեղեցու հասցէին։ Նրանցից նախ Հայր Ս. Կողեանը իր մեծածաւալ ուսումնակարութեան մէջ փորձել է անմիջական գրլիտաւոր հարուածք հասցնել Հայ Եկեղեցու պատմութեան խոշորագոյն երախտաւորներից։ Մազղաքին Օրմաննան Պատրիարքի աշխատութիւններին, հաւատալով, որ նա այդպէս կը արողանան իտաստել Հայ Եկեղեցու պատմութեան համար շատ կարեւոր արժէք ներկայացնող գիտական ոյդ ամրոցի հիմքերը։ Յատուկ կրքով կատարուած նման յարձակումներն ու արտքները եթէ անցեալում ինչ որ չտփով հասկանալի էին, այժմ սակայն, գիտութեան ու մարդկույին մաքր վիթիւնը այս տաշընթացում, եկեղեցական հարցերի ու յարտքերութիւնների փախ-ըմբռնման և Եկեղեցեցիների ու քրիստոնեայ հաւատացեալների, համայնքների միւնքեան ու ի Քրիստոս սիրոյ կապեր սահզենու անվերջ ջանքերի այս շըջանում,

երբ մանաւանդ ինքը Հոռոմի Պապն իր բազմաթիւ յայտաբարութիւններով ու խոստամեներով քրիստոնէական սիրոյ ու միութեան ձեռք է երկարում և հաստատում, ասելով, որ «Այսունիսեա Սուրբ Հոգու գոնականութեամբ անվարան առաջ կ'ընթանայ և լիակատար հաղորդութիւն կ'իրականացնի մեր Եկեղեցիների միջնաւ։ Այս բոլորից յետոյ, անհոգանալի են մոււմ հնագոյն այդ զէնքերով ու սկզբանքներով կրակցները։

Մեր այս ուսումնակիրութեան մէջ մտնրածան կանգ չենք պանելու այն խնդիրներին, որոնք արծարծուած են առևել աշխատութիւններում, այլ բաւարարուելուն ենք մի քանի էական հարցերով, որոնք ընդգրկում ու բնորոշում են նրանց հիմնական ձգուում ու նպաստակը, Առաջինը Հայ Եկեղեցու առաքելութեանութեան ժիտումն է, այսինքն նըրանք, ինչպէս յետոյ կը տեսնենք, մեր Եկեղեցու ծագումը կապում են ոչ թէ Քրիստոսի առողջականութեամբ և կամ նրանց անմիջական աշակերտների, այլ Քրիստոր կուսարուչի հետ, եւ եթէ Ամառունի Եպիսկոպոսի ընդհանուր պատմութիւնների միստ է Դ. գարից, ապա Հայր Կողեանը իր երկի թ. Գլուխը ամբողջութեամբ նուիրել է գրան։

Մինչ բուն նիւթին անդրագառնալը ուզում ենք շշակել այն հանգամանքը, որ ինչպէս Կողեանի, այնպէս էլ Ամառունի Եպիսկոպոսի ու Հայր Ն. Սէքեանի աշխատութիւնները գրուած են կանխամածուած դրոյթներով, այսինքն նախորդ իրենց ունեցած դիրքորոշումներին

2 Պապ Յովաննես Պողոս Բ. Քահանայակեանի հեռագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. ին, Տեւ էջմիածնի, 1978, Ժմբ., էջ 17։

1. Ս. Կողեան, «Հայոց Եկեղեցին», Գեղարքունիք, 1961; G. Amadouni, L'Église Arménienne et la Catholicoité, Venezia, 1978. N. Setian, Eine Rechtfertigung Der Katholischuntertirten Armenischen Kirche Aus Der Geschichte, «Die Kirche Armenien», Stuttgart, 1978. V. G. Matfunian, Die Lateinische Mission in Cross Armenien Bis Zur Mitte Des 18.

հետեւ կովի, նըսանք բարձրացրել են տրւեալ հարցերը, և պարագաներն ու գոյւթիւնն ունեցող փաստերն էլ յարմարեցրել են իրենց առնեցած այդ տեսակէտին, որի բարձր ծագին պարզից եղել է Հռոմի աթոռի ենթակայութեան մէջ և հետագայում, Հայոց Արշակ արքան (359 թ.) և նրա որդիի՝ Գաղ թագաւորը (368-374) այն ինքնիշխան են գարձրել են աւելացնում են որ Ալքահի ու Գաղի ժամանակի գոյութիւն ունեցող ենթակայութիւնը անընդհատ շարունակութիւնն է այն ենթակայութեան, որ սկիզբ առաւ Լուսաւորիչ է:

Եւ այս սկզբունքին հետևելով, ինչպէս Կոգեանը այնպէս էլ Ամառաւնին, այնպէս են ներկայացրել մեր ժողովրդի ու եկեղեցու պատմութիւնը, որ իր այն եղի է մի կողմից Հայ Եկեղեցու ինքնուր որութեան ձգաղ հայրապետների ու քաղաքական գործիչների և միւս կողմից Հառմի աթոռի հետ գործակցելու ու Հառմի Պատիք ենթակայութեանն ու գերագահութեանը համարիտ անձերի միջեւ ծաւալուած անվերջ մի հակամարտութիւն։ Ամրագջ հայ ժողովրդի ու եկեղեցու քաղմուգարեան պատմութիւնը այդպիսի խղճուկ գործների մէջ աեսնել և ներկայացնել, կը նշանակէր այդ ժողովրդին արհամարհնել ու ստորագնահատել և նրան մերկացնել ազգային ու համամարդկային այն բոլոր արքէքներից ու գործերից, որոնք գարեր արդունակ կերտել են այդ ժողովուրդի հաւաքականութիւնն ու անհատականութիւնը, Եւ ընդհանրապէս մի ժողովրդի պատմութիւն այդպէս պատկերել կը նշանակէր նաև անտեսել ու անդիտանալ այն պատմական օրինաչափութիւնները, ուսո՞նք հաստրակութեան ու ժողովուրդների պատմութեան հմքն են հանդիսանում և անորոշում ու անօրինում են նրանց կեանք քում տեղի ունեցած պատմական խոսուոր իրադարձութիւնները, հասարակացն երեսյթների վերափախումներն ու արդացումները։ Այդ օրինաչափութիւններին հետևելով միայն կարելի է պատմական հաջրաբերը իրենց ընդհանուր կա-

պահցութեանց մէջ ճիշդ ընկալելու Այս-
պէս ժօղեանալով հարցին, կը առանենք,
որ քրիստոնէութեան մուտքը Հայուստան
և Նրա պետականօրէն ճանաչումը Տրդատ
Գ. Հայոց թագաւորի և Գր. Առաւառորչի
ժամանակ ոչ պատահականօրէն է տեղի
ունեցել և ոչ էլ հրաշքների կամ բռնի
հրաժանաների միջոցով, այլ քաղաքական,
անտեսական ու մշտակութային նպաստավ
ուր պայմանների ու իրադարձութիւնների շնորհիւ, որոնք նոխապտտարաստել
ու անհրաժեշտ հողն են ստեղծել հայ ժողովութիւններում, նոր այդ կրօնը քարոզ
կելու ու առածելու համար, որովհետեւ
ամէն մի նոր գաղափարախօսութիւն,
վորդապետութիւն կամ կրօն յաղթանա-
կում է ու ամրանում այն դէպքում, երբ
ժամանակի ընթացքում իրեն համար կեն-
սական յենարանն է ունենում:

Տպագրուող մեր աշխատառթիւններից
մէկուժ՝, ցոյց ենք տուել, որ Պարթև-
ների վազարը Ա. Թագաւորի (51-75-
81 թթ.) ժամանակ Պարթևների, Հայերի,
Հրեաների. Ասորիների և ընդհանրապէս
որևէ եհան այլ ժողովուրդների յարաբե-
րութիւնները ընդգայունուել ու սերտ բնայթ
էին սատցիկ և ստեղծուել էր նուա Մի
զինակցութիւն զնդէմ Հռոմէ Վազարչ
Ա. ը այդ համագործակցութիւնն ու զի-
նակցութիւնը գործնական հիմքերի վրա
գնելու նպատակով, Յոյն առեւտրական-
ների, արհեստաւորների և ընդհանրապէս
յունական տարրերի իրաւունքները իր
երկրում ու տէրութեան մէջ սահմանա-
փակում և փիխարէն արտօնութիւններ
է շնորհում իրեն զինակից այս ժողո-
վուրդներին, Նրանք էլ օգտուելով հա-
րաւորութիւններից, աշխատավանում և
առեւտրական ու քարտանային լայն ու
ապահով երթեւեկութիւն ու ապրանքների
փոխանակութիւն են հաստատում. Այս
համագործակցութեան ու քարտանների
ապահով երթեւեկութեան շնորհիւ, տուա
ջին քրիստոնեայ քարոզիչները ճանա-
պարհորդում են արեւելան հեռու երկրներին
են գնում ու իրենց վարդապետութիւնն
են տարածում.

4 Հ. Մելքոնեան, Ադրբեյջանի ու Հայաստանի,
Երևան, 1980:

Վազգորչ Ա. ի և առեւելեան այս ժողով-
վուրդների զինուցաւթիւնը առաւել չառ-
փով դրաւերուել է յատկապէս նաև քա-
զաքակած առաջարկում ու առցմական
գայաւում։ Նրան յաջողուել էր Հոսմի
գէմ մզուազ պատերազմական գործողու-
թիւնների ժամանակ. հայկական, պար-
թեական ու Ադրբեյնի բանակների հա-
մատեղ առցմական գործողութիւնների
միջոցով իր եղբայր Տրդատին (Ա. ին)՝
նախանձել հայոց թոգաւորական գործին։
Այդ յաջմանակի համար իրենց անմիջա-
կան մասնակցութիւնը բերած, անձնաւի-
րաբոր ու հուսատորմութեամբ իրեն ծա-
ռայում բազում հայ ու օտար զինուորա-
կանների ու գործակիցների սրբէս վար-
ձուորութիւն տալիս է պաշտօններ, պար-
գևներ ու նախարարական իրաւունքներ։
Իր հետ եկածներից, հերէական կրօնի
հետեւորդ՝ Շամբաւա- Բագարատը ևս նա-
խարարական իրաւունքներ է ստանում և
նշանակւում արքունիքի տան թագուդիք
առաջետի պաշտօնին։ Մեր այդ աշխա-
տութեան մէջ ցոյց ենք տուել, որ Շամ-
բաւա- Բագարատը անպայման Ադրբեյնից
եկած Ադրբեյնցի այն զօրավարներից և
գուցէ նրանց արքունիքի այն անդամնե-
րին էր, որը ընդունել էր հերէականա
կրօնը։ Համոզուում ենք, որ Յովհանն
Փլավիսուը և մեր պատմահօր համար աղ-
բիւր ծոռայած հերինակը հերէական կրօն
ասելու չեն հասկացել «Առզարիսական կրօ-

⁵ Josephus, Jewish Antiquities, London, 1966, XX. 1. p. 339.

6. Մազմակի Խորենացոյ Պատմութիւն Հայ-
ոց, աշխատութեամբ Մ. Արեգեանի և Ա.
Յարութիւնեանի, Տփղիս, 1913, Գիրք Բ, Գլուխ-
ի, էջ 109.

Արա արքայի կողմանական թիւնց սրբ
հետագայում ճանաչվեց քրիստոնեաց
Անդ աշխարհում:

Ինչպատճեն գիտենք, հրեական այդ կրող
կը Անգամ կահանութիւնը միտին հրեա-
ների համար ստեղծուած կրօն էր և որը
կոլուած էր հրեայ ժողովուրդի փրկուա-
թեան ու Դաւթի թագուարութեան վեա-
րականութեան, այսինքն ձգտում էր իրա-
կանացնել հրեայ ժողովրդի մասնաւթիւնը
և վերականգնել նրա նախկին քաղաքա-
կան կորութիւնն ու նախաւութեանը
Նման գաղաքարախօսութեամբ զինուած
մի կրօն այլ ժողովուրդների մէջ տարա-
ծել անօգուտ էր և անիմաստ Քրիստո-
նութիւնն էր, որ հրեական կրօնի ծոցից
գուրս գալով, մի կողմ դրին նեղ ազգա-
յին այդ գծերը և իր փրկութեան թէերը
տարածեց ամբողջ մարդկութեան, նամա-
նաւանդ հասարակութեան ցածր խաւե-
րի, ընշառածների ու աղքատների վրայ:
Հրէական կրօնի անուան տոկ նոր այս
փորբապեսութիւնն էր, որ առաջին ան-
գամ Քրիստոսի համբարձումից յիտոյ
գուրս բերուց Հրէտատանից ու առաք-
եալների և աշակերտների կողմից քարոզ-
ուեց տարրեր երկրներում ու տարրեր
ժողովուրդներին: Գալիլիայից եկած այս
քարոզիչները ոչ թէ Անգամ կահանուա-
թիւնը, այլ քրիստոնէական այս նոր
փորբապեսութիւնն էին տարածել, և
հասկանալի է, որ սկզբնական շրջանում
այդ կրօնը, մանաւանդ տարրների կող-
մից, ընդունուել ու ճանաչուել է որպէս
հրէտական կրօն: Քրիստոնեաները իրենց
իրենց չէին տարրերում հրեաներից կամ
հրէտական համայնքից և զուում էին հրէտ-
ական տաճարներն ու ժողովարանները՝
Հետաքյում երբ քրիստոնեաների շար-
քերում, մանաւանդ երբ Անտիոք քաղա-
քում, մեծ թիւ էին կողմում ոչ հրեան-
ները: այդ քաղաքում էլ աեղի ունեցաց
քրիստոնեաների բաժանումը հրեաներից
և այդ բաժանումից յետոյ նրանց սատ-
ան սքրիստոնեայ անունը: Եթե եղին
նոցա զամբ ողջոյն ժողովնել յեկեղեցին,
ու այս ժողովուոր սատում, և

7. *Quintus Illyricus*, 9, 11, b, 12,

և անուանել նախ յԱնտիռք զաշտկերտ-
եալոն՝ քրիստոնեայուց:

Հաւատացած ենք, որ Յովսեպոսի ու
Մավսես Խորենացու վկայութիւնները վե-
րաբերում են այն քրիստոնեաներին, ո-
րոնք դեռ չէին բաժանուած հրէական
համայնքից վերջնականութէս, բայց և
«Մովսեսիսկան» չէին: Այնպէս որ Շամ-
րատ - Բագարատի ու Նրա աղջակիցների
ու հաւառողջների միջազգ քրիստոնէա-
կան համատալիքները Աղիսրեմի վրայով
թափանցել էնակ անզայտան Հայուսո-
ւան և որոշակի աղջեցութիւն ունեցել,
որովհետեւ Շամրատ - Բագարատի որդի-
ների ժամանակաշրջանում հայոց թագու-
արը ստիպուած միջոցների է դիմում և
ստիպում, որ հրտադրուեն իրենց այդ
կրօնից: Խորենացին գրում է. «Եւ մասնէ
նեղեալ որդիք Բագարատայ վասն զկուսու
պաշտելոյ»: Երկուք ոմանք ի նոցանէ սրավ
կատարեցան արիստար ի վերայ հայրենի
որինացն զորս ոչ պատկառեմ տսել հե-
տեղունին Անսանինց և Եղիսաբերեանցն: Դիրոխտաբար մեր պատմիչների մօտ այլ
ժամանականութիւններ չեն պահպանեւել
և մենք ուրիշ ոչինչ չգիտենք: Յամեն-
նայն դէպս Թադէոս առաքեալի Հայաս-
տան գալը, Կարծում ենք, որ պատահա-
կանութիւն չէր և կապուած էր այս
փաստի հետ, այսինքն ինչպէս նու, այն-
պէս էլ Քրիստոսի բուլոր առաքեալներն
ու աշակերտները սկզբնական շրջանում
գնում էին այն վայրերն ու քաղաքները
որտեղ հաւատացած էին, որ իրենց գոր-
ծաւնչութեան համար նպաստաւոր պայ-
մաններ կարող էին գտնել: Անկասկած,
ինչպէս ասոցինք, մի այլ հանգամանք
և կարենոր դեր էր խաղում առաքեալ-
ների և նրանց յաջորդների քարոզական
աշխատանքները կազմակերպելու գոր-
ծում, նրանք ապահովութեան նպաստակով
սգաւում էին միայն առաջարկան ճանա-
պարհներից և ճանապարհորդում էին այս
քարուանների հետ միասին: Ազդերնե-
րից գիտենք, որ առաջին որերին նրանք

ոչ միայն իջևանում էին հրեայ առևարտ-
կանների կամ արհեստաւորների աները,
այլ նաև նրանց գարձնում էին իրենց
առաջին գործակիցները: Այսպէս քրիս-
տոնէութիւնն ընդունած առաջին առև-
րականներն իրենց քարուաններով ոչ
միայն առնում էին առաքեալներին ու
քրիստոնեայ առաջին գործիչներին, այլ
նաև լուծում բազում հարցեր ու գուլա-
րութիւններ, որոնք կապուած էին նման
ճանապարհորդութիւնների ու քարոզչա-
կան աշխատանքների հետ: Միջազգային
առևարտական քարուանային ճանապարհ-
ների վրայ Հայաստանը ևս իր Արտաշատ
մայրաքաղաքով Ծրգատ Ա. թ թագաւորու-
թեան տարիներին (նախ 54-63 թթ. և
ապա պաշտօնապէս 66-68 թթ.)¹⁰, նորից
ընկել էր միջազգային տարունցիկ առև-
րակի հենտրոնը, որովհետեւ Միջին Ասիա-
յից և Մերձկանուպեսն ծովակից եկաղ մայ-
րուղին անցնում էր Հայաստանով, նրա
ամրոցջ երկարութեամբ՝ տրեկեֆից դէպի
արեւմուտք¹¹: Հայոց պատմութեան թագ-
մանատարեակում ցոյց է արուած Արտա-
շատի կարեւոր այդ գերբը: Հեղինակը գրել
է. «Մայրուղին Արտաշատի վրայով ու-
նէր այն առաւելութիւնը, որ ճանապարհը
անցնում էր հոյզական լեռնաշխարհներ, որը լինելով բարձր լեռնային սարահարթ,
ամառ մեղմ կլիմայ ունի, իսկ խողազ
երկրագործ աղդաբենակչութիւնը անվը-
տանդ էր գործնում երկրագործական ո-
վագիսներով անցնող սուսերի քարուան-
ների ճանապարհը¹², ինչպէս ճիշդ նշում
է Յ. Մանանդեանը, Միջին Ասիական
ցամացային առևարի հիմնական և ամեն-
ակարձ մայրուղին գնում էր դէպի տրե-
մուտք, ոչ թէ հարաւային առևարտական
կենտրոն Սելեկիա քաղաքով, այլ կերա-
տանայով: Էկբրատանայից առևարտական
քարուանները ուղեւորուած էին Արտաշատ
կամ կարճ ճանապարհով՝ Հուլվանի վրա-
յալ գէպի Մծրին¹³,

(Նար.՝ 1)

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՒՆԵԱՆ

8 Գործք Առաքեաց, ԺԱ. 26:

9 Մավսեսի Խորենացու Պատմութիւն Հա-
յոց, Գիրք Բ, Գլուխ Թ, էջ 119:

10 ՀՀայ Ժաղավարչի Պատմութիւն, Երևան,
1971, էջ 708:

11, 12 և 13 նոյն տեղում, էջ 809: